

ԻՐԱՒՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գովարդոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիւր մեկ
ծարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անկերպայի » 2.60 տոյ. վեցամսեայ 1.50

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկեյ հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍՈՒԱ (Պուլկարիա)

Редация на ВѢСТНИКЪ

„Ирaвункъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Iraounk“

V A R N A (Bulgarie)

Խնայարարեալ ուղղեալ գրութիւնք
ես չեն դրկուիր եւ յարմար դատաւո-
նեալ միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի կամ մասամբ:

Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեկ տեղի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի:

ՍՆԱՊԱՐԾՆԵՐԸ

—*—

Մեր մէջ տխուր, շատ տխուր
երեւոյթ մըն է ամեն քաղաքի ու
խիղ հանգույն անապարծներու ջո-
կատին, որ կը վրտան մըլիւններ,
բոլոր պէս:

Իրաւ որ՝ կեանքի պայքարին
մէջ գրաւելով ընկերային բարձր
դիրք մը, յաղթական դափնին
բով պծնազարդուիլ, մարդու է՛ն
անուշ, է՛ն ցանկալի իտեալն է.
սակայն այդ բարձրութեան հաս-
նելու համար սահմանուած սան-
դուղին աստիճանները անտեսել
կը նշանակէ իմար ոստումներով
անոր աստիճանաւոր վերելքը վը-
տանգել եւ գետնի հաւասար ան.
կումներով պարտուիլ գոյութեան
կռուին մէջ:

Մեր մէջ այս երեւոյթը կրկ-
նուած է յաճախ վաճառականնե-
րու, արհեստաւորներու, գրագէտ
ներու եւ ուսուցիչներու վրայ:
Անոնց մեծ մասը եղած են աւելին
ցուցունելու իմար մարմալէն բռ-
նուած, համեստութեան չըմանա-
կէն դուրս թէ՛ իրենց յառաջդի-
մական ձգտումները չեղողացու-
ցած եւ թէ՛ խաղկ խայտառակ ը-
րած են ինքզինքնին աշխարհի
առջեւ:

Օրինակները պակաս չեն ամեն
գասակարգի մէջ ալ: Բայց որով
հետեւ ընկերութիւնը առաջնորդող
միտքերը եղած են ուսուցիչներն
ու գրագէտները, մէկը՝ մանկու-
թեան, իսկ միւսը՝ հանրութեան
թեւը մտած, կարծէ, որ աստուց
վրայ ծանրանանք ամեն գասակար
գէ աւելի:

Մեր ուսուցիչները մեծ մասամբ
միշտ իրենց խօսքով-այն տիպար
ուսուցիչներն են, որոց նմանը հա-
զիւ ուրեմն կարող են արտագրել
կերպական համալսարանները: Ա-
ստուց մէջ չկայ մէկը, որ իւրա-
ցուցած չըլլայ մանկավարժական ա-
մենանոր մեթոտները եւ չը խոս-
տանայ հրաշքներ գործել իր աւ-
պարէզին մէջ:

Դրական եւ կամ իտեալական
խորունկ հմտութեան զուրկ այդ-
քոստ արարածները այս եւ ասոր
նման պոգալի անապարծութեամբ
կը տեղաւորեն ահաւասիկ կաղա-
պարը վարժարանին մէջ ու կսկսին
իրենց եսը ձուլելով, անմահացնել
իրենց ապուշ յաջորդութիւնը ման
կութեան վրայ:

Ուշադրութիւն ըրէք, տարիներ
կանցնին կը սահին. պարգեւա-
բաշխութեան փայլուն, փայլուն
հանգէտներ տեղի կունենան. մա-
նուկը պատանի դարձած, դուրս
կուգայ վարժարանէն եւ մենք շատ
շատ անոր վրայ կը տեսնենք դե-
ռատի պատուելիի մը հովերը՝ ի-
րական կեանքի պայմաններուն
համաձայն զինքը քշել տանելու
բացարձակապէս անկարող: Հոգիի
փոխանցում մը միայն կասարուած
է վարժապետէն այդ տղուն վրայ
... ուրիշ ոչինչ:

Ա՛յ որչափ կուզէք լուրջ եւ ի-
րական արգիւնք սպասեցէք ատանկ
վարժապետներէ, որոնք մանաւանդ
դարուս վերջին քառորդին մէջ ան
խղճօրէն շահագործեցին զմեզ:

Սուտ խօսեցան թէ իրենք գի-
տեն եւ մեր տղոց ալ պիտի ու-
սուցանեն աս ու ան առարկանե-
րը: Սուտ խօսեցան թէ մեզի
ընթացաւարտներ պիտի տան ծը-
րագրին համեմատ, որուն չլացու-
ցիչ ութիւններու խղճմտի կիրա-
ռումը հրեասուն տարիներէ ի վեր
արդէն իսկ բարձրացուցած պիտի
ըլլար մեր երիտասարդութեան ի-
մացականութիւնը: Սուտ խօսե-
ցան եւ գեռ կը ստեն. . . երբ
կը ծրագրեն շատ մը ուսումներ եւ
մեր ճարպոտ տղաքները իրենց
ցանցին մէջ բռնելէ յետոյ, ան
պատկառօրէն մնաս բարով կըսեն
բնագիտութեան ալ, առողջապա-
հութեան ալ, անգլիերէնին ալ
գերմաներէնին ալ, այս ճիւղին
ալ, այն ճիւղին ալ. . .

* * *

Մեր տոհմային նկարագրէն ա-
ւելի մեր վարժարաններու այս ամ-
լութիւնը, այս յաւիտենական ի-
մաստակութիւնը չէ՛ք նկատեր ա-
մենէն զօրաւոր պատճառը այն
անապարժ գորոշներու գոյութեանը,
որոնց ամենքն ալ սրտով մտքով
Ռօշֆօններ գարձած, իրենց եւ
այդ մեծանուն քանասացիին միջև

բաղդատութեան եզրեր կը փնտ-
ռեն, նկրտելով անոր չափ պաշար
ու հմտութիւն ցոյց տալ հրապա-
րակին վրայ: Ու ասկէ չը հետե-
ւի՛ր այն տգէտ մոլորութիւնը, ո-
րոնցմով կառաջնորդուին իրենք եւ
կուզեն մեզ ալ առաջնորդել յա-
նուն գիտութեան. . .

Է՛հ, չէ՛ք տեսներ: Հայհոյու-
թեանց հեղինակները՝ Գրուտ գը-
րողներ, իսկ գեղեցիկ եւ կամ
մարկայոյզ ծովով զբաղողները՝
բանաստղծներ կը հռչակուին նոյն
իսկ իրենց բերնով:

Մեր մտաւոր յառաջգիւժմութեան
է՛ն կարեւոր բաղիւններէն մէկը
ճանչցուած խմբագրական գրասե-
ղաններուն վրայ կը կծկուին այն.
պիտի ողորմելիներ, որոց բոլոր ա-
ռաւելութիւնն եղած է հայհոյան-
քը եւ կամ շատ շատ գրական
կարգ ու կանոններուն դէմ մեղան-
չելու յանգումները: Ինչո՞ւն է
պէտք ենթակալան բային հետ հա-
մաձայնեցնել, հերիք է, որ ինք
համաձայնած է սա մեծ գաղափա-
րին հետ թէ ինք շնորհքով գրող
մըն է:

Կը փռագտան, բան կը գրեն եւ
այդ արգահատելի կացութեան մէջ
իսկ հպարտ հով մը ունին. . .

* *

Վերջապէս անապարծութիւնը
մեր ամեն գործին մէջ, ահա ինչ
որ հիմնապէս կը քննուի մեր իրա-
կան յառաջգիւժմութեանը. վասն զի
այդ սին պարծենկոտութիւնով կը
մոռնանք ինքզինքնիս եւ անփոյթ
կը գտնուինք մեր թերութիւնները
շտկելու:

Դեղագործ անգամ չենք, կու-
զենք Տօթթօռի թեւերով թռիլ.
Վարկերին անգամ անվտանգ պա-
հելու անկարող ենք, կուզենք մեծ
վաճառականի հովեր առնել: Գըր-
ջակներ անգամ չենք ու Ռօշֆօնին
Քլէմանսօյին՝ մէկ կողմ կեցէք, կը-
սենք ու այսպէսով մեր ու մեր
տոհմին յառաջգիւժմութիւնը կը կա-
ցինքնք կատարեալ անամօթու-
թեամբ:

Այս էջը փակելէ առաջ տեղն է
այդ կարգի կարմրել չը գիտցող
երեսներուն իբր ապառաժ ձօնել
թէ եւ հին բայց ամենէն լաւագոյն
առածը

Ծանի՛ր զքեզ:

ՆԱԽԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

... խմբագիր,

Կը խնդրիմ որ ներկայս հաճիք
հիւրընկալիլ թերթիդ մէկ անկիւ-
նը:

Մեծ ցաւով կիմանանք թէ վա-
նայ Հէքաւ գիւղին մէջ, 400 հա-
յեր թրքեր են, աուրքերը վճարե-
լու անկարող գտնուելուն պատճա-
ռաւ: Արդէն ասկից առաջ ալ ի-
մացանք շատ մը հայերու Ռուսա-
դաւան եւ Պապադաւան դառնալը.
շարքերէն, բանտերէն, անօթու-
թիւնէն, մերկութենէն աղատողնե-
րն ալ այս կերպով կը կորսուին:
Հոգեվարի վիճակ մըն է այս մեր
հայրենիքին համար, որ կը վախ-
նամ թէ բժշկուելիք չունի:

Այսօր մենք պանդխտութեան
մէջ գտնուող Հայաստանցիներս,
մեր զաւակներ, ընտանիքներ հոն
թողելով, անտէր, անօգնա-
կան օտարութեան մէջ թա-
փառական, յուսահատած ենք մեր
վիճակէն ալ, մեր կեանքէն ալ ա-
պագայէն ալ. յուսահատած ենք
բայց ոչ մեր գլխուն եկած փոր-
ձանքներուն համար՝ այլ այն պատ-
ճառով, որ մեր յիշափոխական մար-
մինները, որոնք մեզ աղատելու
համար մէջ տեղ եկած են եւ մեր
գրամն ու արիւնը կուզեն եւ կը
գործածեն. փոխանակ իրար գալու
եւ այս վիճակին դարման մը խոր-
հելու իրարու դէմ ատելութիւն,
հակառակութիւն, հալածանք, մէ-
կմէկ անպատուել կործանելէ զատ
ուրիշ բան մը ըրած չունինք:

Եղբայրներ, հերիք է իրար
հալածելիք, իրար բղկտելիք.
մեր կեանքը, ինչքը, պատիւը,
ամեն օր կոխկուտող իշնամին հա-
լածեցէք:

Չեր այդ արարքը մեր խայտա-
ռակ կերպով ոչնչանալուն կը ծա-
ռայէ, քան թէ աղատուելուն:
Չեր այդ ընթացքը եթէ շարու-
նակէք, ձեր արենակից եղբայրնե-
րուն գոյութեանը դէմ ուղղակի
դաւաճանութիւն ըրած կըլլաք:
Մեր ամենուս այս չլուծած ու չը
տեսնուած դժբաղդութիւնը, թող
քիչ մը ձեր խիղճը արթնցնէ, եւ
մոռցնէ ամեն հակառակութիւն,

ես ու նախանձ . ապա թէ ոչ, այս
ընթացքով . քիչ մնացած է որ
ամբողջ ազգին յաւիտենական ա-
նէժքին և հալածանքին պիտի ար-
ժանանաք :

Պաւլոսյան ունի
վերսինայ, Սերպիա
19 Ապրիլ 1900

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ, 30 ապրիլ 1900

Կամպէթթայի աճիւնը Բարիկ պիտի
փոխադրուի : Կամպէթթայի միտած մի-
ջոցին իր հայրը ողջ լինելով եւ նիս
քաղաքն դադարեցրելով . խնդրած էր իր
որդուն աճիւնը իր բնակած քաղաքին
մէջ ունենալ, կառավարութիւնը զի-
ջած էր հօր մը խնդրանքին : Բայց Կամ-
պէթթայի հայրն ալ մեռած ըլլալով,
անոր գերդաստանէն միայն կին մը մը-
նացած է որ արգիւք լինել չուզեր իր
ազգականին աճիւնին Բարիկ փոխա-
դրուելուն :

Երկար ժամանակէ ի վեր Երեսփոխա
նաց Սենեկին մէկ մասնախումբը այլ
եւ այլ ջանքեր կընէր Կամպէթթայի
աճիւնը՝ ինչպէս նաեւ մի քանի հոգ-
չակաւոր մարդոց աճիւնը փանթէոն
փոխադրելուն :

Փանթէոնը նախկին գեղեցիկ եկեղե-
ցի մ'է որուն մէջ այսօր Յրանսայի ա-
մենայայտնի մարդկանց աճիւնը կը
գտնուի :

Այսօր ուրեմն որոշուած է, Կամպէթ-
թայի մարմինը Փանթէոն փո-
խադրել եւ գուցէ . . . Պաւլոսյանն
ալ :

Ամերիկեան թերթերը գոհութեամբ
կը յայտարարեն երկու վեհափառ պե-
տերու Բարիկ գալը . որոնք բարեհա-
ձեր են ժամանակի մը համար Միաց-
եալ Նահանգները թողուլ, ծուցահան-
դէսը գալ, դիտելու համար :

Այդ բարձր անձնաւորութիւնները
գողերու թագաւորներ են, ասոր հա-
մար է որ Ամերիկացիք գոհութիւն կը
յայտեն անոնց մեկնումին համար :

Այդ բաղաձայնողներէն մին որ տուն
պարզող գողերու թագաւորի տիտղոսը
չահեր է, ճէնթլմէն մէկն է որ մեծ հա-
րստութիւն մը ունի եւ բնական ազ-
նիւ ձեւեր, Նա միլիանատիրոջ մը կեանք
քր կը վարէ, միշտ շքեղ ու կոկիկ հա-
գուած է : Նա 32 անգամ դատապար-
տուած է Միացեալ Նահանգներու մէջ .
նա 17 տարի բանտը անցուցեր է : Իր
հարստութիւնը, վարժութիւնը եւ մա-
նաւանդ իր ազդեցութիւնը մեծ յար-
գանք կազդէ իր ընկերներուն, որոնք
չեն վարանիր զայն իրենց թագաւորը
ճանչնալու :

Անօգուտ է ըսել թէ իր վեհափառու-
թիւնը քանի մը թանկագին քարեր պի-
տի աւելցնէ իր թագին վրայ՝ ծուցա-
հանդէսի ժամանակ . . .

Ասոր հակառակորդը, զոր ամերիկա-
ցիք գրպանահատներու թագաւորը կա-
նուանեն, նոյնպէս այս միջոցիս Բա-
րիկ կը գտնուի : Այս ալ իր գեղեցկա-
խօսութեամբ, չքեղութեամբ, պէտք
եղած տեղը առատաձեռնութեամբ եւ
կատարեալ ճէնթլմէնութեամբ յայտնի
է : Սա իր նուրբ ձեւերով կը յաջողի
մինչեւ մարդու վերջին «եօթան» գող-
նալ եւ այնպէս կրնէ որ գողցուողը ե-
րախապարտ կը մնայ իր վեհափառու-
թենէն :

Անօգուտ է ըսել թէ այս երկու մաս
նազէտները, ծուցահանդէսը պիտի այ-

ցելեն ամենախիստ ծպտուով : Անոնք
չեն ուզեր միւս վեհապետներու նման
իրենց վեհափառութիւնը ցոյց տալ, —
ո՛րչափ համեստ են . . . եւ թէպէտ
թագաւոր, անոնք կը յուսան իրենց
արժանի պատիւներէն խոյս առլ :
Ս. Դ.

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ

Ներկայ հայկական շարժման
չըլանին նախ և առաջ սկսաւ գա-
ղափարներու լիզաշլուծը, որ եր-
թալով ժամանակին ընթացքով
գործնական կերպարանք մը առաւ :
Մտքերու այս յեղաշրջման մէջ հայ
ընեսիրական գրութիւններէ զատ
զլխաւոր դերը ունեցան Արմենիա,
Ղազմէնի եւ Հայաստան թեր-
թերը—այս վերջինը այժմ դարձած
—որոնք Մ. Բօսթօլցալեանի Մ.
Չերազի եւ Մ. Սըվազլիի ու Յ.
Պրուսալիի կողմէ հրատարակուե-
լով օրը օրին կը հրապարակէին և
կը պատկերացնէին Հայաստանի
մէջ անցած դարձածն եւ հայու-
թեան ամենարգահատելի վիճա-
կը . օրուան վիճակին եւ պէտ-
քին համաձայն կոչումներ ընելով :

Այս ձեռնարկութիւնները յայտ-
նի կերպով ունեցան իրենց ազդե-
ցութիւնը . սրոնց արդիւնքը եղաւ
հայուն իր կացութեան եւ ապա-
գային կատարեալ գիտակցութիւ-
նը, որ ալ աւելի կը շեշտուէր յա-
րաճուն եւ ալլատեսակ բռնաբա-
րութիւններով :

Այս դրութեամբ ազգովին այն-
պիսի կացութեան մը հասնաք որ
ամէն անհատ ինքնաբերաբար իր
վիճակին վրայ խորհիլ կը բռնա-
դատուէր եւ դարձանի մը, վերջի
մը, անխուսաբելի հարկը խորապէս
կղզար :

Այս խորհողներու շրջանակը հն-
տըզհետէ լայնցաւ եւ առաջ եկաւ
այն կապը որ դժբաղդութեան եւ
սեւ ճակատագրի նոյնութիւնը կը
ստեղծէ . այս հաւաքումը կազմա-
կերպուելով գոյութիւն տուաւ յե-
ղափոխական կուսակցութիւններու :
Այս հայ յեղափոխական կուսակ-
ցութիւններէն առաջին անգամ հը-
րապարակ կուգան Հնչակեանները
իրենց Հնչակ Օւկան թերթովը :

Ուրկից քիչ յետոյ ծնունդ ա-
ռաւ Հայ Յեղափոխական Դաշնակ-
ցութիւնը իր Դրօշակ անունն օռ-
կանովը : Երկու հայ Յեղափոխա-
կան կուսակցութիւններ, որոնք
թէեւ հիմնական տարբեր սկզբունք
ներու դաւանող, բայց միեւնոյն
նպատակաւ իրարմէ անկախ գոր-
ծունէութեանց յարքով մը միակ
նպատակով ու աշակիցը եղան ճաճ-
կահայ տառապող տարրին շարժ-
մանը եւ բողոքներուն, թէ Պոլիս
եւ թէ Մայր Հայրենիքի ու կի-
րիկիոյ մէջ :

Յեղափոխութեամբ հայը իր առաջին
քայլերուն մէջ իսկ հանդիպեցաւ
թշնամիին այն ամեն հարուածնե-
րուն, որոնք բնական հանդիպում-
ներ են բռնութեան դէմ շարժող
ամեն ժողովուրդի :

Բայց մեր դժբաղդութիւնները
եւ մեղ դէմ ելած հալածանքները,
մեր գլխուն տրուած հարուածնե-
րը անլուր եւ անպայման կերպով

սրուած եկան : Ազգային դժբաղ-
դութեան ծանրութեանը զլխաւոր
եւ առաջին պատճառը ունինք այ-
սօր քաղաքակիրթ աշխարհին ան-
տարբերութիւնը դէպի նահատակ
հայր, մանաւանդ լուսաւորեալ աշ-
խարհի առաջնակարգ տեղը բռն-
նող վից մեծ քրիստոնեայ պիտու-
թեանց շահամոլ քաղաքականու-
թիւնը, որոնք փոխանակ անհա-
ւասար ուժով իր գոյութեան պահ
պանման կռիւր մղող գիւցաղն ժո-
ղովուրդի մը վազած արիւնի կրտ-
րիւն, անոր արիւնէն շահ մ'ալ ի-
րենք առնելու չափ ցածցան եւ հոն
մնացին : Առաջին զլխաւոր պատ-
ճառէն յետոյ կանցնինք ցոյց տա-
լու երկրորդ եւ գրիթէ առաջնոյն
չափ կարեւոր պատճառին . որ է
թուրք վարչութեան վարչական
քաղաքականութիւնը հանդէպ հա-
յուն որ չէ կրցած եւ կամ չէ ու-
ղած ըմբռնել թէ Հայկական պա-
հանջը, այն պահանջն է որ իր
երկրին, պետութեան, ամբողջու-
թիւնը եւ անկախութեանը պահ
պանման եւ պահպանութեանը հա-
մար անհրաժեշտ միակ պայմանն
է :

Մեր ազգային աննախանձելի և
արգահատելի կացութեան մէջ յե-
ղափոխութիւնը միակ ճամբան էր
հայուն կապտուած եւ անխոճ-
րէն բռնաբարուած անվիճելի իրա-
ւունքներուն համար ունեցած բո-
ղոքին ձայնը զարնել տալու Սու-
լթանի ականջին . եւ պահանջելու
ապրելու այն վիճակը որ թէ բը-
նական եւ թէ քաղաքական օրէնք
ները սահմանած են մարդուն ըլ-
լայ թէ անկախ եւ կամ հպատակ
նոյնպէս երկուսը խնդրանքներէ եւ
պաղատագրին դիմունքներէ յետոյ .
գործնական բողոքի շարժումը միակ
հարկն ու միջոցն էր . զօրեղ և հն-
գինակաւոր եւրոպայի հասկցնելու
հայուն ինքնաճանաչութիւնը :

Հետեւաբար ներկայ տեսութիւն
ներով յեղափոխութեան սկզբունք-
քին ազգովին գրկուելը արդարա-
ցի եւ անհրաժեշտ կը դառնայ :
Սակայն այդ շարժման մէջ նախ-
նական քայլերնուս ատեն ստաց-
ուած տխուր փորձառութիւններէն
չօգտուելով յեղափոխութեան ձեւն
ու շարժմանց եղանակը իրաց վի-
ճակին եւ յարափոփոխ ժամանա-
կին պահանջումներուն յարմարե-
ցնել չը գիտցուիլը միայն մեր Յեղ-
կուսակցութիւնները կը դատա-
պարտեն . ինչպէս կը դատապարտ-
ուին այն ամեն մարմինները որոնք
ճակատագրիներ վարելու կիլին և
պահանջումներուն համեմատ ճիւղ-
նօրէն շարժելու հարկը չեն ուզեր
եւ կամ չեն կրնար ըմբռնել :

Մեր յեղափոխական գործունէ-
ութեանց համար եղած այս ակ-
նարկը ամեն անկողմնակալ մտքէ
արդարացի ընդունուիլը անկաս-
կած է . բայց միեւնոյն ատեն կը
հաւատանք թէ այդ յարգելի մար-
միններն ալ իրենց կարգին ընդու-
նած են այլ եւս պարզուած այս
ամենտարրական ճշմարտութիւնը :

Մեր ազգային յեղափոխական
շարժմանց գալով, գլխաւորներն են
Ձէյթունի հին ապստամբութիւնը
—Պապիկ իշխանի ատեն որուն մաս
նակցած էր նաեւ հանգուցեալ Զա-


քըրեան : Կարնոյ պատրաստուած
ապստամբութիւնը որ քահանայի
մը մատնութեամբ վիժեցաւ : Կու-
կունեան արշաւանքը . Սասնոյ շար-
ժումը, Ձէյթունի ապստամբութիւ-
նը փոքր հայքի եւ վասպուրակա-
նի այլ եւ այլ հրոսակային արշա-
ւանքները, Ասոնցմէ զատ Պոլսոյ
մէջ եղած զլխաւոր ցոյցերը են
Մայր եկեղեցիի ցոյցը Ալեքան-
Պատրիարքի օրով, Պապը Ալեի
ցոյցը, Պանքայի ցոյցը, եւ անոր
յաջորդ տարին կրկին Պապը Ալեի
անյաջող ցոյցը . նոյնպէս զլխա-
ւոր նշանակելի շարժումներէն են
հայ լրտես—դաւա ճաններու պար-
բերական սպաննութիւնները :

Այս ժողովրդային շարժումները
որուն ամեն հասակէ ամեն սեռէ
եւ դասակարգէ մասնակցողներ ե-
ղան դրական օգուտ մը եւ այլ-
դինք մը առաջ չը բերելէ զատ,
առաւել քան երբեք վատթար վի-
ճակ մը ստեղծեց հայութեան, որ
300,000 հոգիներ կորսնցուց, կա-
նուաւոր, սիսթէմաթիք ջարդերով
որոնք տեղի ունեցան ուղղակի վի-
հապետին և կառավարութեան հը-
րամանաւ ու կարգադրութեամբ
բը . 50,000 թերուս աւելի որ-
բերով օժտուեցաւ . իր կրթական
սրբալան և բարեգործական հաս-
տատութիւններէն ուսնաք կործա-
նեցան, աւարի տրուեցան և պղղ-
ծուեցան : Ազգին մէկ մասն ալ
տարագրութեան, պանդխտութեան
և բանտերու ու աքսորանքներու
մէջ աննախանձելի օրեր կանցնէ :

Նիւթական փճացումն ալ եկաւ
կատարեալ ընել աղետը եւ ամեն
անոնք որ հուրէն, սուրէն ճողպ-
րեցան . մերկութեան մէջ, անսը-
ւաղութենէ մեռնելու վտանգին մէջ
են :

Ինչպէս կը տեսնենք նոր դարա
շրջանին մէջ, միւթարական մուտք
մը չենք ընել . բայց այս նկարա-
գրութեամբ ու պարզութեամբ ճշմարտու-
թիւնները, որոնց անպայման տե-
ւողութիւնը կրնայ փճացնել Հա-
յութեան պատկառելի մեծամաս-
նութիւնը եղող Տաճկահայութիւ-
նը, այնչափ չեն սպառնար հիմ-
նական ոչնչացման, որչափ՝ ներ-
քին աղտոտութիւնները, բարոյա-
կանի չգոյութիւնը, եղբայրասպան
կռիւները, մութ հաշիւները, անձ
նական նկատումներն ու եսը տեղի
չտան, —բըր ամեն ատենն ունի
իրար բռնելու հարկը կայ— Ալեք-
յին ճգնաժամի այս ահաբեկող շր-
ջանին մէջ, որ հակառակ պարա-
գային ճգնաժամը կը փոխուի հո-
գեվարքի և փճացումը հանրային
կըլլայ :

(Շարունակելի)



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՋՈՒՐՐ ԻՐԻՔԵԻ ԴԵՂ

Ջուրի, նամանաւանդ պաղ Ջուրի, իբր ատոգիսպահական եւ կամ նոյն իսկ իբր բուժիչ միջոց գործածութիւնը, կարծուածէն շատ աւելի հին է։ Մովսէս, մարմինը կազդուրելու ու գորացնելու նպատակաւ պաղ Ջուրի լուծանքներ կը հրահայէր ստէպ։ Նոյնպէս Երգ դարուն մէջ (Ն. Գ.) շատեր Ջուրին յատկութիւնը ու իր կիւանդութեանց մէջ ունեցած օգուտը փոքր ի շատէ ուսումնասիրած եւ այնպէս ջրաբուժութեան հիմը գրած էին։ Իսկ Ջրգ դարու (Յ. Գ.) վերջերքը, Մուհամմէտ իր նոր հաստատած կրօնի հիմնական պատուէրներէն մին ըստ պաղ Ջուրի լուծանքները, մանաւանդ որ Արաբիոյ նման — ուր ծառաւ առած է մահմետականութիւնը — տաք կլիմաներու տակ, առողջ կազմութեան մը գոյութիւնը պահելու իբր գլխաւոր միջոց եւ մարմնի թափումն ուն ալ միակ պայման ցոյց կուտար։ Երթալով յաջորդ դարերու մէջ կը քննարկեն անձեր, որոնք մասամբ մը թողած են թէեւ ջրաբուժական դրութիւնը ընդհանրացնել, առանց սակայն պատշաճ եւ օրինաւոր ձեւի մը քակ զայն կիրարկելի ընելու։ Նոյն իսկ իբր մը եղան անպիսիներ՝ որոնք իբր համայնաբոյժ դարման մը նկատեցին ամեն կերպ հիւանդութեանց համար, առանց բացառութեան։

Վերջապէս ջրաբուժական դրութիւնը մերթ լքած, մերթ ընդգրկուած, խառն է մինչեւ ներկայ ատեններս, ուր ջրաբուժութեան ընծայած օգուտները մասին եղած անդրադարձան, կէս մը ենթադրական, կէս մը գիտական խնդիր տրամաբանութիւնները այլ եւս վերջապէս գիտական գործը ու անհրաժեշտ փաստեր եւ տեսութիւններ երևան եկած են։

Վերջերս ջրաբուժութեան համար գլխաւոր աշխատողներէն է Ֆլէտտի, որ բժշկական այս ճիւղը մասնաւորաբար մշակելով, պաղ Ջուրին մեր կազմութեան լրացած ազդեցութիւնը անոր — Ջուրին — ո՞ր տեսակ հիւանդութեանց մէջ օգտակար, իսկ երբեմն ալ ընդհակառակը, ի՞նչ պարագաներու մէջ վնասակար ըլլալը մեկին եւ որոշ կերպով ցոյց առած է։

Ֆլէտտիէ զատ, նոյն դրութեան հետեւող եւ ընդհանրացմանը ոչ նուազ աշխատած է Գիւստաւ Գիլման արքան, արդ, առանց եւ իրենց հետեւողներուն շնորհիւ է, որ եւրոպական ամեն քաղաքակրթ երկրներու մէջ, գրեթէ առանց բացառութեան, ջրաբուժական դրութիւնն դիւրութեամբ կիրառուող համար հոյալիսպ եւ ճոխ հաստատութիւններ հիմնած են ամենակատարիւս գործելով միջոցներով։

Ջուրի իբրեւ դարման անհերքելի համար բազմաթիւ եղանակներ կան, որոնց գլխաւորներն են։

1. Մասնաւոր հաստատութեանց եւ կամ նոյն իսկ մեր տուններու մէջ գրեթէ բոլոր եւ բաւական քանակութեամբ ու պարունակող տաշտերու (պանեօ) մէջ մեր մարմինը ամբողջովին եւ կամ մասամբ ատեն մը թրջել։

2. Ստորերկայ միջոցներով տեղի մը օդ տաքցնելէ յետոյ, հոն մտնել եւ պաղ կամ տաք ջրի լուծանքներ ընել։

Ինչպէս են նա եւ մեր արեւելեան քաղաքները, որոնց օդը փոքր ի շատէ լուրջաբար ալ կը պարունակէ իր մէջ ջր։

3. Իր մէջ զանազան աղբը պարունակող ծովի ջուրին մէջ ատեն մը մնալ եւ կամ լաւ եւ լոգալ։

4. Աւելի կամ պակաս բարձրութեան մը թափուած ջուրերը ընդունել մեր վրայ, ինչպէս են օւղերը։

5. Պաղ ջրով թրջուած սաւանի մը մէջ փաթտուել եւ կամ լաթի մը կտոր եւ կամ սառույցի կտորուանքներ պարունակող պարկեր մեր մարմնին ու եւ մէկ կողմը դնելով, վրանին լաւ մը գոցել։ Դարձեալ պաղ ջուրի մէջ թրջուած սպունգով կամ լաթի մը կտորով մեր մարմինը լաւ մը չփել եւն։

Ըստ երեւոյթի մէկզմէկէ ախտանշաններ երեւոյթ ջրաբուժական այս հիմք եղանակները — իրաց առեալ ջրերի լուծանքը — ազդեցութեամբ եւ արդիւնքով շատ քիչ կը տարբերին իրար մէջ, երբ ջրմուտեան աստիճանին արդէն իրարու հաւասար է։ Հետեւաբար լուծանքներու տեսակին եւ անոնցմէ իւրաքանչիւրին սեփական եղող լատկութեանցը վրայ խօսելէ առաջ, պէտք է գիտնալ թէ ինչ բան է Ջուրի մը ջրմուտեան աստիճանը եւ թէ ինչ օգուտ կրնայ ընծայել Ջուր մը իր ջրմուտեան աստիճանին համեմատ։

Սակայն ասկէ առաջ պէտք չէ մոռնալ թէ, երբ մարդ Ջուրին անմիջական ազդեցութիւնը կը կրէ, մարմնին մակերեսը գոնեւոր մորթային երակներուն վայրկեանական կծկումով՝ արիւնը դէպի ներս, այսինքն (սիրտը, ուղեղը եւ թոքը) կը խուժէ։ Ինչ որ կը հասկցուի լուծանքի սկզբնաւորութեան ատեն զգացուած պաղ դողէն եւ կամ մորթային յայտնի գունատումէն։

Այսպէս դէպի ներս խուժող արիւնը՝ պաղ մը մեր մարմնին ներսերը մնալէ յետոյ, կրկին կը վերադառնայ, որուն ակնյայտնի նշանն այն առաջ եկած մորթային կարմրագոյն կերպարանքն է։ Արեան այս տեղափոխութեանց մէջ, դէպի ներս եղած խուժումին ազդեցութիւն, իսկ վերադարձին հակազդեցութիւն կրսուի։

Լոգանքը բարեբար ազդեցութիւն ընելու համար պայման է որ ազդեցութեան եւ հակազդեցութեան այս երկու շարժումները օրինաւոր եւ ըստ բնականի յարմար ըլլան, ինչ որ կրնայ ձեռք բերուիլ շատ անգամներ, զգուշանալով չափազանց պաղ եւ կամ խիստ տաք ջուր գործածելէ։ Կախուակ պարագային մեր մարմնին ու եւ մէկ կէտին վրայ հաւաքումը կրնայ աղետաբեր հետեւանք մը առաջ բերել։

Ջուրերը իրենց ջրմուտեան աստիճանէն նայելով տաք, գաղջ եւ պաղ անուանելով երեք կարգի կը բաժնուին։

Ա. Ընդհանուր առմամբ 20 աստիճանէ վար գտնուող ջուրով եղած լոգանքներ պաղ կրսուին։

Բ. 20-32 աստիճանին մէջ գտնուող ջուրերը գաղջ կը համարուին։

Գ. 32-էն աւելի ջերմութիւն ունեցող ջուրերը տաք կը համարուին։ (Շարունակելի) Ը. Ե.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղւոյ Հայ իգական սեռը արդէն մասնակցած ըլլալով «Վաստակականի Որբախնամ Ընկերութեան», որոշած է ըստ կարգի կան լաւագոյն ժողով կազմել, որու օրակարգը պիտի ըլլայ Գործադիր Ժողովոյ ընտրութիւն։

Ուստի կը հրաւիրենք, որ ամեն մասնակցող եւ մասնակցելու փափաքողներ ներկայ գտնուին, կիրակի, ապրիլ 30 ժամը 10էն 11 Ուղղ. վարժարանի օրիորդաց շէնքին մէջ։

Ի դիմաց Որբախնամ Ընկերութեան անդամութեան հետեւն են։

Ա. ԱՄԻՐԱՆԻԱՆԻՅԱՆ
Ա. ԱՋԵԱՆՈՐԵԱՆ
Պ. ՅԱՐՈՍԻՄԵԱՆ
Ի. ՆՈՐԻԵԱՆ
Ի. ՊԱՆԺԵԱՆ
Վառնա, 24 ապրիլ
Կնիք

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ, երկուստ Որբախնամ Ընկերութիւնը ապրիլ մէկէն սկսած է իր բաժնեգէները եւ մասնաւոր նուէրները դանձել եւ ընդունել։

Ուստի հրապարակաւ կը յայտարարեմք եւ լիալոյս համար թէ տեղւոյս եւ թէ արտասահմանի ընդհ. հայութիւնը չպիտի դառնան իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը եւ օգնութիւնը որովհետեւ սոյն պէտքը արդի ժամանակաւ անհրաժեշտ եւ վսեմանքն էն կարեւորագոյնն է սոյն օրերէնէն եւ որ պիտի կազմեն ապագայ հայութեան հաստատուն կռուանք։

Մնա՛մք յարգանք
Ի դիմաց գործ. ժողովոյ երկուստ Որբախնամ Ընկերութեան «Վաստակականի»
Ատենադպիր վասն Ատենապետի
Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ ՅՈՒՆԻՍ ԲԱՐՍԱՆԵԱՆ Կնիք

Հասցէ
Յ. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ (Պուկարիա) ՎԱՄԵԱՆ
Յ. Գ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՎԱՏՈՆԱԿԱՆ Կնիքը չի կրող ընկալագիրներու վճարումը ստանդարտ վարչութիւնը պատասխանատու չէ։
1900 ապրիլ 17 Վառնա

ԼՐԱՔԱՆ

Քիւրդ Համիտիէ գունդէն այս անգամ Բաղէշէն երեք քուորդ ժամ հետ գտնուող Պոռ գիւղին վրայ յարձակելով կրակի ու աւաւրի կուտան, բնակիչներէն ոմանք ալ կրակի մէջ նետելով կայրեն։ Գիւղին երիտասարդները կարելի եղածին չափ կը դիմադրեն։

Կրակի մէջ այրուածներէն կը իշուին Եղօ Ղազարեան, Վարդան Ղազարեան, փէշիվան Աւետիս Մուրաթեան, Վարդան Սարգիսեան եւ Մուրաթ Սահակեան։ Այս հինգը իրենց ունեցած զէնքերով մինչեւ վերջը կը գիւղադրեն, մա. նաւանդ Եղօն որուն փամփուշտները երբ կը հատնի կը բռնեն զանի եւ ողջ ողջ կը խորոզեն։ Իսկ միւս երիտասարդներէն ոմանք ալ ազատելով լեռները կապուստանին։

— Տիգրանակերտէն ունեւած տեղեկութեան մը համաձայն, կարավարութիւնը Չիքուշի որբանոցը փակած է որբերէն 27 բան. տարկած է, իբրեւ իդափոխական ներ, որոնց ամենէն մեծը հազիւ 15 տարեկան կայ եղիր։

— Բարեգի հայ գաղթականութիւնը ինչպստտ Հայաստանի որբերուն 2624 ֆրանքի հանգանակութիւն մը ընելով խրկած է Պատրիարքարան։

— Տօքթ Երուսիմ Դաւիթեան հայ գիւթագործ իր քանդակարարութեան մէջ ըրած կարեւոր գիւտովը, Բարեգի մարգարանական ընկերութեան անգամ ընտրուած էր, այս անգամ բժշկական կաճուածն պատկաւոր պաշտօնատուր անուանել։

— Տուցահան, Էսին ութիւ Բարեգի Գոյլժ տը Գրանսի մէջ տեղի ունենալիք պատմական համագործին ժողովին աշխատակցելու համար «Բնաւոր» տնօրէն Տիգրան Կարապետ Պաւլեան հրաւիրուած է։

— Պրիկ 2 ց 8

(Պ) Պէտք է անկրկնաւոր ընկերութեան վերաբերել։

բանակերտի Ազգային որբանոցին 600 ոսկի յատկացուցած է մինչեւ վեց տարի։

— «Հաւաքածոյ Հայ ժողովրդական երգերու», երաժշտական հանդէսի տնօրէնութիւնը որոշեց է Յուդահանդէսի առթիւ նուագահանդէս եւ երեկոյթներ կազմակերպել, ցուցահանդէսի այցելուներուն այս միջոցաւ ծանօթացնելու համար Հայաստանի երգերն ու պարերը։

— Հետեւեալը նոյնութեամբ կարտապնէր Նոր կեսնքի վերջին թիւէն, զոր անգլիական թերթերէն առած է։

«Վերջերս Երւսղիմ պալատը սարափահար կը մնայ աներեւակայից լուրի մը վրայ։ Պոլսոյ ոստիկանութիւնը կը տեղեկագրէ թէ Հայ Յեղափոխականներ իսլամ ուխտաւորի կերպարանքով Հիճազ գացել են, հոնտեղ հակասուլթանական յայտարարութիւններ տարածելու համար իսլամական կեդրոնին մէջ։ Սուլթանը այս ահեղ վտանգին առջեւ շուտ առնելու համար կը հրամայէ քննիչ յանձնաժողով մը անմիջապէս Հիճազ առաքումը։ Ոստիկանական բարձրաստիճան պաշտօնէի մը, Մէհմէտ Ալի պէյի նախագահութեան ներքեւ յանձնաժողով մը ճանաչելով կիսնայ։

«Եղեւութիւնն ալ նախապէս կը հեռագրուի Հիճազի կուսակալ Ահմէտ Բաթիպ փաշայի, որ դաւի մը կասկածը կուեննայ, Պոլսոյ Ոստիկանական բարձրունք քիչ շատ տեղեկ ըլլալով, Յանձնաժողովը այնինչ ոտքը Հիճազ կը դնէ, կուսակալը քննիչներուն պայուսակները քննելու նախազգուշութիւնը կուեննայ. և ահա անոնց մէջ ծրարում կը գտնէ հակասութեան. կան յայտարարութիւններ, Ոստիկանութեան խաղը կը յայտնուի։ Այս յայտարարութիւնները իբր թէ Հիճազ պիտի բռնուէին, և թէ, իսլամութեան կեդրոնավայրը բազմաթիւ խեղճեր, և թէ Պոլիս շատ մը հայեր պիտի ձերբակալուէին և ահագին գործ մըն է կը բացուէր ոստիկանութեան, որուն նախարարը անշուշտ իր աշարջութեանը համար լիաւատ վարձատրութիւններ պիտի ստանար իր մեղսակիցներուն հետ։

«Բաթիպ փաշա իր գիւտը կը հեռագրէ Պոլիս. ոստիկանութեան նախարարը Երւսղիմ կը կանչուի և այնպիսի ծանր յանդիմանութիւններ կը յետ կը քաշուի, որ բայց ոչ պաշտօնէն»

Ա. Զ. Դ.

Անցեալ 99 Նոյեմբեր ամսոյ մէջ Ռուս ճութէն Վառնայի ճամբով ուղղակի Պաթում մեկնած Պ. Արտաշէս Ղաթիպեանի բնակարանէն պատկանող գոյքեր, այս անգամ ետ դարձուցող կը գրտնուին Վառնայի մ. ք. տան մէջ. գոյն ստանալու համար Պաթումի մարտտան հարկ անհրաժեշտ եղող թուղթեր կը գտնուին տեղւոյս քաղաքներէն ձեւ

Սարգիս Հայր Ղարիպեանի քով, զոր կուած Պաթումէ յանձնակատար Մատուր եանցի կողմէ, խնդրուելով որ այդ թուղթերը եւ գոյքերը յանձնուին միայն յիշեալ Ա. Ղարիպեանի աներոջ որդւոյն, որ Ռուսոսք կը գտնուի եւ զեր:

—Արդ, հրապարակաւ կաղդարարուի, որ, ով որ է այդ անձը, իր, այդ ընտանիքին պատկանիլը հաստատող միջոցներով թող փութայ դիմել Տէր Սարգիս հօր, որպէսզի «Մակապիմաթ»ի վարձքը չը բանի:

ԹԻԻՐԻԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

Ախրէն զամմ ու իւսմէ օլընան վերկիւրտէն տօլայը մէշհուր Տաւատ Մահմուտ փաշա Սուլթանա աթիտէքի թէլէկրաֆը վերմիշ տիր: «Վերկիւրտէն տիր»ը ըրրմիւսըն խապէրինի ալարադ, հրսս իթտիկիմիզ քէտէր ֆէլքէլատէ օլմուշ տըր: պու մահվ իտիճի իտտիպտաուն իճրասը. սիզին թիւրքիա իչին օլ գատար ֆէլքէլթ կէթիւրէն, ճանապարհէն իտարէնիզ իչին օլան շիքայէթիւրին վէ չըգան երեքսէք սէպէրին, հագգըլ օլտըզլարընը իսպաթ իտէր: Ահալիմիզին նամըն օլարագ, քի անլէրին մէնֆաաթ ու հուգուգընը մուհաֆապա իչին պուրայա կէլմիշիզպու եէնի իսկէնճէյի իճրատէն կէրի տուրմանըզ սիզէ նասիհաթ իտէրիզ: Պէտրադդ վէ սէֆիլ ահալինիզ: աղրը վերկիւրտէն տիր թէլէկրաֆինիզէ. բէք գօլայըզլա հիւքիւթիւրինիզին մէտարիֆինի աղալթա պիւրիսինիզ. սիզին էթրաֆընըզ ալան խըրըզլարը հաֆիլէրին գօլարագ. վէ հատըզ հիսպաըզ վարիտաթ ու կէլիւրինիզին պիր գըսմընը մալիյէյէ պըրագմազլա:»

—Սթանպօլ մէքթէպը թըպպիյէմի ասքէրիյէ շակիրտլէրի մէքթէպ իտարէսինտէն խօշնուտ օլմա տըզլարը իչին ալագլանուպ շիքայէթ իթմիշէր: Պուլըն իզգէրէնէ շակիրտլէրտէն տօգսանը տէր տէսթ վէ հապս օլընուպ. պուլընտան օն տէօրտիտէ տիվանը հարպ էօնիւնտէ մուհաքէմէ իտէլէրէք սիւրկիւնէ կիթմիշէր:

—Պահրիյէ փաշայարընտան աս պըզ Պասա վալիսի վէ շիմտի իսէ Սթանպօլ իման րէիսի համտի փաշանըն Սթանպօլտան ֆիրար իթմիշ օլտուղընը թէլէկոաֆլարտան անլաշըմը տըր:

—Իտալիատա նէշր օլընան քըրիպուլնա կազէթասընըն պէյանընա նազարէն Աւստրիա իմրէրաթօրը Ֆրանց-Եօզէֆին Պէրլինէ զիյարէթինին ասըլ սէպէպի Ալպանիանըն Աւստրիա թարաֆընտան զապթ օլընմասը հագգիտայ Ալման իմրէրաթօրը իլէ միւզաքէրէտէն իպարէթ իմիշ:

—Պու կիւնլէրտէ Սթանպօլտա պէօյիւք ֆամիլիալարա մէնսուպ վէ էհէմմիյէթլի մէմուրիյէթլէրտէ պուլընան բէք չօգ թիւրքլէր:

Ժէօն-Թիւրք տէյու թէվգիֆ վէ հապս օլընմըշլար տըր:

—Ֆրանսըզ պիր սէրմայէտա. րան գուլմառնիասը թիւրք հիւքիւ մէթինէ իսթիգրազ թէլիֆինտէ պուլընմըշ տըր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Սօֆիատա եափըլմագտա օլան թրամպլըն ինչաաթը իլէրլէմէք. տէ օլուպ, էօնիւրգտէքի ֆուլիս ալընտա իսթիմա պուլմագ իմիշ ֆէլա Սօֆիայը էլէքթրիք ըշը զը իլէ թէնվիլ իթմէք իչին լա. զըմ կէլէն թէրթիպաթ սեպ. ալընա գատար պիթէնէք տիր: Սօֆիատան 12 քիլօմէթր ուզալըզ տա օլան իսկէրի կէչիտինտէ պին իքի երկը մէթրօ ուզուլըզնտա պիր թիւնէլ հօլը եափըլմըշ էլէքթրիք թէլլէրի իլէ թրամպլաթ լարը օրտան կէչիւմէք իչին:

—Պուլկար զըրաաթ վէ թիւս. րէթ նէպարէթինէ եէնի իճատ օլընմըշ պիր քարթ փոսթալ թագ. տիմ օլնմըշ տըր քի, իչպուքարթըն իւզէրինէ 6160 ֆրանսըզմա լուղէթ եազմագ միւքիւն իմիշ: Շիմտի պու քարթը Բարիզ սէրկիսի պուլկար շիպէսինէ կէօնտէրիլէնէք տիր:

—Բրէնս հազրէթլէրի Ալմանիա վէլիստընըն հատը պուլըն վա. սըլ օլմուրը միւնստիպէթի իլէ իճ. րա օլընմագ շէնլիլէրտէ հազըր պուլընմագ իչին Ալմանիայա կիտէնէք իմիշ:

—Պուլկարիատա եափըլմագտա օլան խալըլարըն րէսիլէրի իչին Պուլկարիատա պուլընան ուստա. լար վէ սէնաաթ քեարլար պէյին. տէ րէզապէթ իճրա իթտիլիմէսի նի զըրաաթ վէ թիւսարէթ նէղա. րէթի թարաֆընտան գարարլաշտըրըմըշ տըր:

—Քէլա գրաաթ վէ թիւսարէթ նէպարէթի, տէրիլէրի պօլարմա. զա մալսուտ Սօֆիատա պիր տէրս հանէ քիւլաա իթմիշ օլուպ, իչպու տիրս, անէ էօնիւրգտէքի մա իիս 15 ինտէն իթիպարէն աշըլա. ճագ տըր:

ՍԻԻԹԵՆԵՎԼԻՅԷ

Աւստրիա իմրէրաթօրը Ֆրանց Եօզէֆ Պերլինէ կիթմիշ:

—Էվրոպա վէ Ամերիգայը տօ. յաշմագ իչին չըգան Պօէր Հէյլէ. Թը մուրախաասըն Նիւ Եօքա կիթմէք իչին հօլա չըգմըշ տըր:

—Ռուսիանըն կովկաս օրտուտու էրքեանը հարպ հէյլէթի զապըթանը, Ռուս օրտուտընը հանկը հօլ իլէ սուհուլէթլէ Հինտիստան սէվգ օլընապիլիլի թէտգիգ իթ. մէքտէ իմիշէր:

—Մ. Ամերիկա հիւքիւմէթի խարիճիյէ նազըրը, Պօէր Հէյլէթը միւրախաասընը գապուլ իթ. մէյէնէք իմիշ:

—Չար վէ Չարիցանըն Մոս. քուտա պուլընտըզլար էսնատա զայէթ պէօյիւք ասքէրի պիր կէչիտ իճրա օլընմըշ տըր:

—Պօէր օրտուլարընտա խըտ. մէթ իթմէք նիլէթի իլէ, Բօր. թուկալտա կէօնիւլիւ ալալարը թէշքիլ օլընմագտա իմիշ:

—Հինտիստանտա հիւքիւմէթա օլան գըլթըգտան տօլայը, լօնտ. րատա մալսուտէն նէշր օլընան պիր րէսպէտէ պլան օլընաղընա նազարէն, սէֆալէթին տէրէնէսի հատտինտէն զիյատէ օլուպ, եա. լընըզ պիր վիլայէթտէ մէվնուտ 1,300,000 հալպանթտան 1 միլ. հօնը աճըրգտան, սուսըրըրգտան թէլլէթ օլմուշ տըր: Պուլման մա. տա թէքրար աճըրգտան էօլէն ին. սանլար կիւնպէկիւն չօղալմագտա հաթթա բէք չօգ փալիտէլէր պիր լօզմա էքմէք իչին էվալարընը սաթմագտա իմիշէր: Հալպանաթ պուլընմագտա տօլայը էքսէրի եիւք վէ պինէք արապալարընա ին սանլար կէչիւմէքտէ իմիշէր:

—Եազըլարտա ինկիլթէրա րէ. իսի վիւքէլաւը Լօրա Սալպըրի իսթիֆա իտուպ պիւսպիլթին իշտէն էլ չէքէնէկիւնի գալիյէն զանն օլընմագտա տըր:

ՍՈՒՀԱՐԵՊԷ

Մուհարէպէ հագգընտայ ալընան էն սօն հալպաթիլէր նազա. րէն ինկիլիլէր էհէմմիյէթլի պիր հարագէթ իթմէկէ պաշլայսճագ. լար իմիշ:

—Ալընան պիր հալպաթիլէ նա. զարէն Լօրա Ռօպէթթա 70,000 քիլիլէք պիր օրտու վէ քիւլիլէթ ի մուհիմաթ իլէ 15 կիւնէ գա. տար իրէթօրիա իւզէրինէ երիւլէնէք իմիշ:

—Օրանժըն ճէնուպ թարաֆլա. րընտաքի Պօէրլէր ինկիլիլէր իւ. զէրինէ հիւճիւմ իթմէքտէ տիրէր:

—Լօրա Ռօպէթթա եազըն կիւն. լէրտէ իճրա իտէնէքի էհէմմիյէթ. ի հարագէթ իչին. իւշ պէօյիւք օրտու հազըրլայուպ քէնտի հարա. քէթի էսնասընտա օնլարտա շիտ. տէթլէ Պօէրլէր իւզէրինէ հիւճիւմ իտէնէքլէր իմիշ: իչպու օրտու. լարտան պիրի 30,000 քիլիլէն միւրէքքէպ օլուպ Լօրա Մէթուէ. նին թահթը գօմանտասընտա սօլ գօլը թէշքիլ օլընմագ. ս պիր իսէ Ժէնէրալ Պուլըրըն թահթը գօմանտասընտա օլարագ սաղ գօլը թէշքիլ իտէնէքլէր, իւչին. ճի մէրէք օրտուտա իսէ տօղրու. տան տօղրու Լօրա Ռօպէթթա թահթը գօմանտասընտա օլարագ օրտան իլէրլէյէնէք տիր:

—Բրէթօրիատան վէրիլէն մա. լիւմաթլարա նազարէն, Պօէրլէր օլ թարաֆլարը զայէթ միւհէքէլէթ միշլէր տիր: Ֆագաթ աքսի հալ. տէ ինկիլիլէրէ մուքալէմէթ օլըն. մատըզ հալտէ Պօէրլէր չըմալա տօղրու կէրի չէքիլէրէք պուլընան զայէթ երեքսէք վէ հսման կէչիւ. մէզ տաղլարա սըղընարագ, թէք. րար մուհարէպէյէ տէվամ իտէնէք լէր իմիշ:

—Աւստրիա իմրէրաթօրը Ֆր. րանց Եօզէֆ թրանսպալ մուհա.

րէպէսինէ նիհայէթ վէրիլէք ի. չիւն, ումու Էվրոպա տէվլէթլէրի նի միտալէլէյէ տալէթ իտէնէ. կիւնի սէօլլէնմէքտէ տիր:

—Ժէնէրալ Ֆրէնշ վէ հալիլ. թըն մայէթլէրինտէ պուլընան սիւ վարի ալալարը իլէ Պէթմօնթէն ճիւլարարընտա կէզմէքտէ օլան Պօէրլէրի թաագիպ իթմէքտէ տիր. լէր: Պօէրլէր թապանչու հօլը ի. լէ աղըր աղըր կէրի չէքիլմէքտէ տիրէր:

—Էլան Պօէրլէրտէն մուհաթէ. տէ պուլընան Մէյրիկի գուրթար մագ իչին Ժէնէրալ Հընտըրըն թահթը գօմանտասընտա պէօյիւք պիր օրտու թէշքիլ օլընմագտա իմիշ:

—Պօէրլէր Ռուբըրթին մուհա. սէրէսինի գալտըրուգ 5000 քիլիլէ կէրիլ չէքիլմիշէր:

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ընդ մէջ Ֆրանսայի, Տալիսա, տանի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Պոնտիկիոյ եւ Ռուսիոյ, G. & M. Madtheossian freres 8 Rue du Croissant

PARIS Ծանօն կառնուճ կատարիլ զգեստիկնաց, ըմպիկնաց, ուտեստի եւ այլ ամեն տեսակ պիտոյից յանձնարարութիւնք, մինչեւ մէկ ֆրանք արժողութեամբ, հարսանեկան օժիտի համար իրեղեններ, ինչպէս նաեւ զեղալման, ներու (droguistes), բժշկանքու եւ այլ արհեստաւորաց վերաբերեալ վերաբերեալ եւ գիտական գործիքներ զեղօրէք եւ գրեանք Բարիկի ամենա. առաջնակարգ վաճառատուններէ, հաս. տատութիւններէ կամ գործարաններէ գնելով, իրենց նշանակեալ իսկական գներով կուղարկէք contre remboursement եւ կամ արժէքը ուրիշ ու է յարմար եղանակով գանձելով:

Մետաքսեղէն, բրդեղէն, բամպակ. զէն եւ այլ Ֆրանսական ու Անգլիական նորաձեւութեանց վերաբերեալ ամեն կարգի արտադրութեանց փոքր թէ մեծ վաճառատանց եւ մանաւորաց հաշույն կատարեալ ձեռնհասութեամբ գնումներ կը կատարենք փոքրաքանակ թէ մեծաքանակ եւ ուղղակի ֆապրիքաներէ, ամեն տեսակ գունաւոր թէ ճերմակ ազամոնդներու եւ մարգրիտներու գնումներ եւ վաճառումներ կը կատարեմք Երաշխատեալ ապահովագոյն միջոցներով: Ամեն տեսակ տերի. կուլթիւններ կը հազորդեմք միշտ ըստ յոյճ աղբիւրներէ քաղելով: Կրտսն. նեմք այլ ընդ այլոց նամակներ իր. խանակութիւնք, տոնելիքներու, կա. լուածոց եւ փոխանակազոյ զանա. զ. կը կատարենք առեւտրական ու ս. զ սնուորական շրջանակների վերաբ. ինչպէս նաեւ ուսանողաց եւ այլ ան. դասակարգի ուղեւորաց ամեն օգտ. էտ տեղեկութիւններ կը հաղորդենք եւ գիւրուլթիւններ կընծայենք: ԵՐԱՇԽԱՍԹՈՐԵԱԼ ՈՒՂԱՄՏՈՐԻՆԵՐ

ԽԻՍՏ ՀԱՄԵՍ ՊԱՅՄԱՆՆԵՐ Կ. եւ Մ. Մատթէոսեան եղբայրք

ԹԱՏՐՈՆ «ՄԱՆԹՐԱԼ»

Վաղը, հինգշաբթի երկուր, ինչ. պատ Տիկին Պ. Ֆասուլեանի, վէ սէլօ հայ դերասանական խումբը մի պատրաստութեամբ պիտի ներկայացնէ «Կարծեցեալ հոմանունին» կամ «Պի. կիւնան գըզըզազ» տրամ գօմէթի արար եւ ծիծաղաշարք զաւելտ մը:

ՕՏԳՈՐՆԻԿՆ Ի. Դրաշչեա